«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-22/7-1

ք.Դիլիջան «18» 11 20 թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արմնաբ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Մերուժան Սարգսյանի, որը գործում է «Արմնաբ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6,433,900.00 (վեց միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն (Վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող): Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից

այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Արմսնաբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1	ՀՀ, ք. Երևան, Գյուլբեկյան փ. 24շ, բն. 62
«Արարատբանկ» ԲԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510042359830100	h/h 2052822101991001
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 00194379
տնօրեն Գ. Սարգսյան	տնօրեն Ա. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 18 » 11 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-22/7-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ապրանքի										
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
									Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	18231910/3	Ձմեռային համազգեստ	Անահիտ Կարապետյան Ա/Ձ	բաղկացած ձմեռային բաճկոնից, ձմեռային տաբատից, սվիտերից և ձմեռային գլխարկից, տեխնիկական բնութագիրը ներկայցված է կից Հավելված 1.1-ով	լրակազմ	58,490.00	6,433,900.00	110	ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1	110	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում

***Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, փոխարինումն ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:**

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07619891

տնօրեն _____ Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արմսնաբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գյուլբեկյան փ. 24շ, բն. 62
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 2052822101991001
ՀՎՀՀ 00194379

տնօրեն _____ Մ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«18» 11 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-22/7-1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1
Ձմեռային համազգեստ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.1. Ձմեռային բաճկոնը և տաբատը կարվում են կաթնագույն կամ բեժ գույնի, 50±2 % պոլիէսթեր և 50±2 % բամբակ բաղադրությամբ, 215 ± 5 % գրամ/մ² մակերեսային խտությամբ ջրավանիչ կտորից:
Բաճկոնի առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է արհեստական կտորով, երկկողմանի մգդակարված 300 գրամ/մ² մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերի ներսը՝ արհեստական կտորով, երկկողմանի մգդակարված 200 գրամ/մ² մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է 65 ± 5 % գրամ/մ² մակերեսային խտությամբ արհեստական կտորից: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում բաճկոնի ներքին եզրից 5,5-6 սմ բարձրության վրա մշակված են երկու վրադիր ուղղանկյունաձև գրպաններ կափույրներով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակներով, 15-17 մմ տրամագծով կոճակներով: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 19 ± 1 սմ, երկարությունը՝ 21 ± 1 սմ սմ: Բաճկոնի կրծքավանդակի հատվածում տեղակայված են երկու վրադիր ուղղանկյունաձև գրպաններ, որոք փակվում են կափույրներով: Կափույրները փակվում են 2,5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Կրծքավանդակի գրպանների չափսերն են՝ լայնությունը 13 ± 1 սմ, երկարությունը՝ 13 ± 1 սմ սմ: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ:
Բաճկոնի աջ թևերի վրա կարված է վրադիր ուղղանկյունաձև գրպանկափույրով, որը կոճկվում են 2,5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Թևքերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով ամրացրած պատաներ, որոնք ամրանում են թևքին 2,5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Ձախ թևի վրա ուսակարից 7սմ ներքև կարվում է «Մ.Մելքոնյանի անվ. ՌՄՎ» հիմնադրամի լոգոյով թևքանշան, որի նմուշը տրամադրում է պատվիրատուն:
Բաճկոնը կոճկվում է 5 հատ 20 մմ տրամագծով կոճակօղակներով:Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 1,5 - 2սմ: Բաճկոնի գոտկատեղից վերև մշակված է կուլիսա, որի միջով անցում է պարանանման փոկ՝ նախատեսված բաճկոնի չափսի կարգավորման համար: Բաճկոնի կրծքավանդակի աջակողմյան վրադիր գրպանի վերնամասում ամրացվում արհեստական զամշի վրա ասեղնագործված Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՄՎ հապավումը:
Բաճկոնի օձիքը ծալովի է: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի երկու եզրերում ասեղնագործվում են ՌՄՎ – ի փոքր տասրբերանշանները: Բաճկոնի աստառի ձախ կրծքամասում մշակված է ծոցագրպան:

1.2. **Ձմեռային տաբատը** կարվում են կաթնագույն կամ բեժ գույնի, 50±2 % պոլիէսթեր և 50±2 % բամբակ բաղադրությամբ, 215 ± 5 % գրամ/մ² մակերեսային խտությամբ ջրավանիչ կտորից: Տաբատը կոճկվում է 3-4 օղակ – կոճակներով, որոնցեից վերևինը երևացող, իսկ մնացյալը թաքնված կոճկվածքով: Առաջամասում ունի կողային թեք կտրված ներկարված գրպաններ: Ներկարված գրպանի աստառը մշակվում է բամբակյա կտորից:Տաբատի ծնկային հատվածից վերև տեղադրված են երկու վրադիր ուղղանկյունաձև գրպաններ, որոք փակվում են կափույրներով: Կափույրները փակվում են 2,5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: վրադիր գրպանների չափսերն են՝ լայնությունը 16 ± 1 սմ, երկարությունը՝ 20 ± 1 սմ սմ: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ:
Անդրավարտիքի ներդիրը մշակվում է 200 գրամ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է անջրաթափանց գործվածքից աստառացուի հետ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 40/2 մինչև 58/6 չափս-հասակի, համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված ցանկի: Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 15սմ բարձրության վրա կողակարին կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը:Մատակարարումից առաջ մատակարարը ներկայացնում է մեկ օրինակ հաստատման համար:
Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝2 լրակազմ:

2. Սվիտեր (հատ)

Սվիտերը հյուսված է կիսաբրդյա մուգ կաթնագույն կամ բեժ գույնի մանվածքով: Բաղադրությունը բուրդ և ակրիլ: Հյուսվածքը երկկողմանի է, թևերի և փեշերի մանժետները 1:1 հյուսվածքով: Օձիքը շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Նույն հյուսվածքով է նաև պարանոցի մասը: Ուսերին, ամուր բամբակյա կտորով կարված են ուսադիրների ամրացման համար նախատեսված լեզվակներ, որոնք կոճկված են սև գույնի մետաղական կոճգամներով: Լեզվակների վրա հագցված են կտորից ուսադիրներ, որոնց վրա կարված են մեկ,երկու կամ երեք գծով ժապավեններ: Ուսամասերում և թևերի արմնկային հատվածներում լրացուցիչ կարվում են հմազագեստի գույնին համապատասխան վրադիր կտորներ:

3. Գլխարկ ձմեռային, արհեստական կարակուլից (հատ)

Ձմեռային գլխարկը բաղկացած է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալներով ծոծրակամասից: Երեսացուն՝ կաթնագույն բեժ գույնի, 50±2 % պոլիէսթեր և 50±2 % բամբակ բաղադրությամբ, 215 ± 5 % գրամ/մ^2 մակերեսային խտությամբ ջրավանիչ կտորից: Ականջակալներով ձմեռային կեպին կարվում է կարակուլե արհեստական մորթուց: Ներսամասը 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակարվում է մետաքսյա աստառով, ներսից տաքացնող ներդիրը մշակված է 100 գրամանոց սինտեպոնով: Հովհարի ներսից ներկարվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Կարակուլը մշակվում է հովհարի սկզբից մինչև վերջ, իսկ դիմացի մասը մնում է կտորով:

Գլխարկաբոլորքի բարձրությունը պետք է լինի 8,5-8,8 սմ:

Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ:

Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2 Անհրաժեշտության դեպքում և պատվիրատուի պահանջով նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարն, համաձայնեցվում է Պատվիրատուի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված:

3. Պատվիրատուի պահանջով Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ եզրակացություն

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Արմսնաբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1	ՀՀ, ք. Երևան, Գյուլբեկյան փ. 24շ, բն. 62
«Արարատբանկ» ԲԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510042359830100	հ/հ 2052822101991001
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 00194379
տնօրեն_____Գ. Սարգսյան	տնօրեն_____Մ. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
« 18 » 11 2022թ. կնքված
ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-22/7-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18231910/3	Ձմեռային համազգեստ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6,433,900.00	6,433,900.00	6,433,900.00

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07619891

տնօրեն---------- Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արմենաբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Գյուլբեկյան փ. 24շ, բն. 62
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 2052822101991001
ՀՎՀՀ 00194379

տնօրեն---------- Մ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ